«ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՆՏ ԱՐՄԵՆԻ ՍԱՐԿԻՍՈՎ

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՒՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ՍԵՂՄԱԳԻՐ

ԺԲ.00.02 - Հանրային իրավունք - սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ԵՐԵՎԱՆ-2026

МЕЖГОСУДАРСТВЕННАЯ ОБРАЗОВАТЕЛЬНАЯ ОРГАНИЗАЦИЯ ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ «РОССИЙСКО–АРМЯНСКИЙ УНИВЕРСИТЕТ»

САРКИСОВ ГРАНТ АРМЕНОВИЧ

ПРОБЛЕМЫ КОНСТИТУЦИОННО-ПРАВОВОГО СТАТУСА СОВЕТА БЕЗОПАСНОСТИ

АВТОРЕФЕРАТ

кандидата юридических наук по специальности
12.00.02– Публичное право (конституционное, административное, финансовое, муниципальное, экологическое, европейское право, государственное управление)

ЕРЕВАН-2026

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայում

Գիտական ղեկավար՝ **Հրայր Վարդանի Թովմասյան ի.գ.դ., դոցենտ**
Պաշտոնական ընդդիմախոսներ՝ **Հարությունյան Արմեն Ռուբիկի ի.գ.դ., ք.գ.թ, պրոֆեսոր**
Ստեփանյան Հասմիկ Արշավիրի, ի.գ.թ., դոցենտ
Առաջատար կազմակերպություն՝ **ՀՀ ՆԳՆ կրթահամալիր**

Պաշտպանությունը կայանալու է 2026 թվականի հուլիսի 29-ին՝ ժամը 15:00-ին, «Ռուս-Հայկական համալսարան» բարձրագույն կրթության միջպետական կրթական կազմակերպությունում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի իրավագիտության 063 մասնագիտական խորհրդի նիստում (0051, ք. Երևան, Հովսեփ Էմինի 123):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ «Ռուս-Հայկական համալսարան» բարձրագույն կրթության միջպետական կրթական կազմակերպության գրադարանի գիտական աշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2026 թվականի հունիսի 27-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

ի.գ.թ. **Ջ.Հ. Հայրապետյան**

Темя диссертации утверждена в Академии государственного управления Республики Армения

Научний руководитель: **Грайр Варданович Товмасян; д.ю.н., доцент**
Официальные оппоненты: **Арутюнян Армен Рубикович; д.ю.н.; к.п.н., профессор**
Степанян Асмик Аршавировна, к.ю.н., доцент
Ведущая организация: **Образовательный комплекс МВД РА**

Защита состоится 29 июля 2026 года в 15:00 на заседании специализированного совета 063 по Юриспруденции КВОН РА при Межгосударственной образовательной организации «Российско-Армянский университет» (0051, г. Ереван, ул. О. Эмина, 123).

С диссертацией можно ознакомиться в читальном зале для научных работников библиотеки Межгосударственной образовательной организации высшего образования «Российско-Армянский университет».

Автореферат разослан 27 июня 2026 года.

Ученый секретарь специализированного совета,

к.ю.н., **Дж. А. Айрапетн**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության հետազոտության արդիականությունը: Թե՛ պետականագիտությունում, թե՛ սահմանադրական իրավունքի տեսությունում և թե՛ առավելապես պրակտիկ իրականությունում առկա է խիստ հստակ ընկալում առ այն, որ յուրաքանչյուր պետության հիմնական, նույնիսկ ամենաառանցքային գործառույթն ազգային անվտանգության ապահովումն է: Պետության ազգային անվտանգության ապահովումը բարդ և բազմաշերտ գործունեության ուղղություն և բնագավառ է, որի համալիր հետազոտումը և համակողմանի ուսումնասիրությունն առանցքային առաջնահերթություն է հատկապես չհայտարարված պատերազմական իրավիճակում գտնվող Հայաստանի Հանրապետության համար:

Կախված պետությունների՝ համաշխարհային քաղաքականությունում և միջազգային հարաբերություններում զբաղեցրած տեղից ու դերից, ինչպես նաև պետության առջև դրված խնդիրների իրականացման համատեքստից՝ տարբեր է Անվտանգության խորհրդի (որոշ պետություններում Ազգային անվտանգության խորհուրդ) տեղն ու դերը պետական կառավարման համակարգում:

Սույն հետազոտության շրջանակում մենք փորձել ենք տալ ստորև առաջադրված հարցերի պատասխանները: Այսպես՝

Բացահայտել պետական կառավարման համակարգում Անվտանգության խորհրդի սահմանադրահիրավական կարգավիճակը, ինչպես նաև վերջինից բխող դերն ու նշանակությունը.

Վեր հանել Հայաստանի Հանրապետության Անվտանգության խորհրդի իրավասությունների շրջանակը և այլ պետական մարմինների հետ հարաբերակցությունը.

Պարզել Հայաստանի Հանրապետության Անվտանգության խորհրդի կողմից ընդունված իրավական ակտերի նորմատիվային բնույթը: Մասնավորապես հետազոտել՝ արդյոք դրանք սահմանո՞ւմ են, ինչպես նաև կարո՞ղ են սահմանել համապարտադիր վարքագծի կանոններ, թե՞ ոչ.

Բացահայտել Անվտանգության խորհրդի կողմից ընդունված իրավական ակտերի տեղը, դերը, նշանակությունը, ինչպես նաև կիրառելիությունը Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի աստիճանակարգության մեջ.

Բացահայտել պետական կառավարման համակարգի վրա Անվտանգության խորհրդի հնարավոր ազդեցությունն ու փոխգործակցությունը պետական այլ մարմինների հետ.

Վերլուծել Անվտանգության խորհրդի նախագահի պաշտոնի ստանձնման հետ կապված միջազգային և ներպետական իրավական փորձը:

Այս հարցերին համապարփակ և ընդգրկուն պատասխաններ տալը խիստ արդիական է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման գործառույթի իրացման համատեքստում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սահմանադրության 2015 թվականի խմբագրությամբ

Անվտանգության խորհրդին է վերապահվել *պաշտպանության բնագավառի հիմնական ուղղությունները* սահմանելու սահմանադրական պարտականությունը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության աշխարհաքաղաքական դիրքը՝ սույն հարցադրումների պատասխանների հստակեցումը է՛լ ավելի արդիական ու առանցքային է դառնում:

Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը և տեսական հիմքը: Հետազոտության թեմայի, թեմայի առարկայի և վերջիններից բխող սահմանադրաիրավական ու իրավաքաղաքական հիմնախնդիրների վերաբերյալ իրավական, պետականագիտական, ինչպես նաև իրավաքաղաքական խոր և համապարփակ սահմանադրաիրավական և իրավաքաղաքական վերլուծություններ Հայաստանի Հանրապետությունում գրեթե չկան: Ըստ երևույթին, հետազոտության առարկայի ու օբյեկտի վերաբերյալ գիտական հետազոտությունների գրեթե բացակայությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ Հայաստանի Հանրապետությունը՝ որպես ինքնիշխան պետություն, կայացման անցումային փուլում է: Ո՛չ սահմանադրաիրավական, ո՛չ քաղաքագիտական և ո՛չ էլ պետականագիտական հարթություններում դեռևս չեն տրվել թեմայի վերաբերյալ առաջ քաշված առանցքային հարցերի խորը և համապարփակ պատասխաններ:

Հարկ ենք համարել անդրադառնալ առհասարակ Անվտանգության խորհրդի սահմանադրաիրավական կարգավիճակի էվոլյուցիային՝ հատկապես խորհրդարանական կառավարման հայկական մոդելի համատեքստում: Հատկանշական է, որ խորհրդարանական կառավարման հայկական մոդելն իր բնույթով էականորեն տարբերվում է աշխարհում առկա դասական խորհրդարանական կառավարման մոդելներից, և, հետևաբար, սույն պարագան չէր կարող իր ազդեցությունը չթողնել նաև Անվտանգության խորհրդի ձևավորման, կազմի ու կառուցվածքի, ինչպես նաև վերջինիս, այսպես կոչված, նախագահության վրա: Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ խորհրդարանական կառավարման մոդելի հանրապետություններում քիչ չեն դեպքերը, երբ Անվտանգության խորհուրդը կամ դրան համարժեք այլ պետական մարմին նախագահում է հանրապետության նախագահը, սակայն սույն պարագան Հայաստանի Հանրապետությունում այլ է. Հայաստանի Հանրապետությունում Անվտանգության խորհրդի նախագահը Հանրապետության վարչապետն է:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը Անվտանգության խորհրդի սահմանադրաիրավական կարգավիճակին առնչվող հիմնախնդիրն է, վերջինիս տեղը պետական կառավարման համակարգում թե՛ որպես առանձին ինստիտուտ և թե՛ պետական ապարատի մյուս մարմինների համար՝ որպես կամուրջ պաշտպանության բնագավառը համակարգող, այսպես կոչված, մինի-կառավարություն: Հետազոտության առարկան Անվտանգության խորհրդի՝ որպես պետական մարմնի ծագումն ու զարգացումը, կազմի ու կառուցվածքի հիմնախնդիրներն են, ինչպես նաև Անվտանգության խորհրդի ընդունած իրավական ակտերի բնույթը:

Ատենախոսական հետազոտության նպատակը: Սույն հետազոտության նպատակն է ամբողջական և համապարփակ վերլուծության ենթարկել Անվտանգության խորհրդի (մինչև Սահմանադրության 2015 թվականի խմբագրությունը՝ Ազգային անվտանգության խորհուրդ) ստեղծման պատմաքաղաքական և իրավաքաղաքական էվոլյուցիան, վերջինիս կազմի ու կառուցվածքի, ինչպես նաև պետական ապարատում հատկացված տեղի ու դերի սահմանադրաիրավական հիմնախնդիրները թե՛ տեսական և թե՛ պրակտիկ հարթություններում:

Սահմանադրությամբ նախատեսված այս կարևորագույն պետական ինստիտուտի գործառույթների, կազմի ու կառուցվածքի վերլուծությունների նպատակն է բացահայտել իրավաքաղաքական այն խնդիրները, որոնք ծառացել են Հայաստանի Հանրապետության առջև իր ազգային անվտանգության ապահովման բնագավառում հիմնական գործառույթ իրականացնելու ընթացքում: Իրավաքաղաքական հիմնախնդիրների բացահայտումից, վերհանումից զատ՝ նպատակ ունենք կանոնակարգել ի հայտ եկած բացերը, լրացնել, մշակել վերջիններս կարգավորող նորմատիվ բազան՝ ըստ անհրաժեշտության առաջարկելով թե՛ օրենսդրական և թե՛ սահմանադրական փոփոխություններ:

Ատենախոսական հետազոտության թեմայի օբյեկտի և առարկայի համատեքստում բարձրացվող հարցերի պատասխանները գտնելու նպատակով առաջարկում ենք ուշադրությունը սևեռել **սահմանադրաիրավական հետևյալ խնդիրների վրա.**

Ինչպես ռոմանո-գերմանական, այնպես էլ անգլո-սաքսոնական իրավական համակարգի անդամ-պետությունների օրինակներով իրականացնել Ազգային անվտանգության խորհուրդների ստեղծման և ձևավորման պատմաքաղաքական և իրավաքաղաքական վերլուծություններ՝ ընդգծելով վերջիններիս առանցքային տարբերությունները, ինչպես նաև դուրս բերելով Հայաստանի Հանրապետության պարագայում կիրառելի ամենաարդյունավետ տարբերակը.

հետազոտել և համադրել հետխորհրդային հանրապետությունների Անվտանգության խորհուրդները (ինչպես նաև վերջիններիս համարժեք պետական մարմինները)՝ բացահայտելով ընդհանրություններն ու առանձնահատկությունները.

իրականացնել Հայաստանի Հանրապետության Անվտանգության խորհրդի ձևավորման իրավաքաղաքական պատմության էվոլյուցիայի վերլուծություն.

բացահայտել Հայաստանի Հանրապետության Անվտանգության խորհրդի տեղն ու դերը պետական կառավարման համակարգում.

հետազոտել մի կողմից՝ Հայաստանի Հանրապետության Անվտանգության խորհրդի, մյուս կողմից՝ Ազգային ժողովի, և երրորդ կողմից էլ՝ Կառավարության փոխհարաբերությունների սահմանադրաիրավական հիմնախնդիրները.

հետազոտել Հայաստանի Հանրապետության Անվտանգության խորհրդի և պետական մարմինների միջև գոյություն ունեցող սահմանադրական և

իրավաքաղաքական համագործակցության կապը և բացահայտել վերջինիս սահմանադրաիրավական խնդիրները.

իրականացնել Հայաստանի Հանրապետության Անվտանգության խորհրդի կազմի ու կառուցվածքի իրավաքաղաքական վերլուծություն՝ դուրս բերելով սահմանադրաիրավական խնդիրները.

հետազոտել Հայաստանի Հանրապետության Անվտանգության խորհրդի ձևավորման, գործունեության բնագավառները կարգավորող նորմատիվ իրավական բազան՝ բացահայտելով վերջիններիս անկատարությունը, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության հանդես գալ օրենսդրական փոփոխությունների գաղափարով:

Ատենախոսական հետազոտության գիտական նորույթն ու պաշտպանության ներկայացվող դրույթները: Ատենախոսական հետազոտություն իրականացնելու նպատակով կանխորոշված խնդիրների համատեքստում փորձ է արվել սահմանադրագիտության և իրավունքի մյուս ճյուղերի սկզբունքների, օբյեկտների, ինչպես նաև հիմնադրույթների օժանդակությամբ համակարգված ուսումնասիրել, հետազոտել, վերլուծել և ամփոփել Անվտանգության խորհրդի ստեղծման, ձևավորման, կազմի և կառուցվածքի, պետական կառավարման համակարգում վերջինիս տեղի ու դերի սահմանադրաիրավական կարգավիճակի վերաբերյալ իրավաքաղաքական հիմնական հարցերը, բացահայտել Անվտանգության խորհրդի լիազորությունների ու գործառույթների իրականացման համատեքստում ի հայտ եկած սահմանադրական, օրենսդրական և տեսական խնդիրները, ինչպես նաև առաջարկել գործնական կոնկրետ լուծումներ՝ սահմանադրությամբ նախատեսված այս լրջագույն ինստիտուտի բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով:

Գիտական նորույթը:

Առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրվել Անվտանգության խորհուրդ հասկացությունը, որը, ըստ էության, ամբողջությամբ բացահայտում է վերջինիս էությունը: Հայաստանի Հանրապետության Անվտանգության խորհրդի կազմի և կառուցվածքի համատեքստում առաջին անգամ հիմնավորվել է, որ առկա է Անվտանգության խորհրդի սահմանադրաիրավական և իրավաքաղաքական նոր մոդելի ընդունման անհրաժեշտություն՝ վերջինիս սահմանադրական գործառույթների խորը և համապարփակ իրականացմանը նպաստելու համար: Հիմնավորվել է այն մոտեցումը, որ Անվտանգության խորհրդի կողմից իր կայացրած որոշումների նկատմամբ իրականացվող վերահսկողության և մշտադիտարկման բացակայությունը կասկածի տակ է դնում այդ մարմնի որոշումների կենսունակությունը: Հիմնավորվել է ազգային անվտանգության բնագավառը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ Անվտանգության խորհրդի կողմից եզրակացություն ներկայացնելու անհրաժեշտությունը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշմամբ Անվտանգության խորհրդի կանոնադրության հաստատման հրատապությունը:

Ատենախոսության գիտական նորույթը բացահայտող առավել նշանակալի հեղինակային դատողությունները ձևակերպված են **պաշտպանության ներկայացվող հետևյալ հիմնական դրույթներում.**

1. Չնայած այն հանգամանքին, որ թե՛ սահմանադիրը և թե՛ օրենսդիրը ամրագրել են «Անվտանգության խորհուրդ» եզրույթը, որևէ նորմատիվ իրավական ակտ չի բացահայտում Անվտանգության խորհրդի սահմանումը: Հետազոտության ընթացքում հիմնավորել ենք Հայաստանի Հանրապետության Անվտանգության խորհրդի հեղինակային սահմանումը՝ ***Հայաստանի Հանրապետության Անվտանգության խորհուրդը սահմանադրական, կոլեգիալ համակարգող մարմին է՝ ստեղծված ապահովելու Հայաստանի Հանրապետության Կառավարության, իսկ պատերազմի ժամանակ՝ զինված ուժերի գերագույն հրամանատարի գործառույթների և լիազորությունների իրականացումն ազգային անվտանգության ապահովման, ինչպես նաև արտաքին և ներքին հարաբերությունների բնագավառներում:*** Ավելին՝ հիմնավորել ենք հիշյալ սահմանման սահմանադրական ամրագրման անհրաժեշտությունը, որի պարագայում էապես կհստակեցվի Անվտանգության խորհրդի սահմանադրաիրավական կարգավիճակը:

2. Հիմնավորել ենք Անվտանգության կամ Ազգային անվտանգության խորհուրդների դասակարգման (մոդելավորման) հետևյալ չափանիշները.

ա) ըստ կազմավորման փաստաթղթի.

բ) ըստ նախագահող սուբյեկտի.

գ) ըստ կազմի.

դ) ըստ անդամների սահմանադրաիրավական կարգավիճակի:

3. Անվտանգության խորհուրդը Սահմանադրությամբ նախատեսված իր գործառույթն իրականացնելու համատեքստում օժտված չէ օրենսդրական այնպիսի կառուցակարգերով, որոնց պարագայում իր կայացրած որոշումների կատարման նկատմամբ կունենա վերահսկողական և մշտադիտարկում իրականացնելու որոշիչ իրավասություն: Այս համատեքստում հիմնավորվել է, որ իր գործառույթի պատշաճ իրականացման նպատակով անհրաժեշտ է վերջինիս օժտել այնպիսի լիազորություններով, ըստ որոնց Անվտանգության խորհրդը կայացրած որոշումների կատարման ընթացքի նկատմամբ կկարողանա իրականացնել պատշաճ վերահսկողություն, համակարգել որոշումների կատարման ընթացքը, մշտադիտարկել այն՝ հընթացս արդեն իսկ կայացրած որոշումներում ըստ անհրաժեշտության կատարելով համապատասխան փոփոխություններ:

4. Աշխատանքի ընթացքում հիմնավորվել է, որ Անվտանգության խորհրդի՝ օրենսդրությամբ ամրագրված կազմը (օրենսդրությամբ սահմանված պետական պաշտոնների սպառիչ ցանկը) չի բխում խորհրդարանական կառավարման համակարգի հետևյալ առանձնահատկությունից.

մասնավորապես, հաշվի առնելով այն հանգամանքը, որ պատերազմ հայտարարելու և խաղաղություն հաստատելու մասին որոշումների

ընդունումը, ինչպես նաև արտակարգ և ռազմական դրությունները վերացնելը, արտակարգ և ռազմական դրությունների իրավական ռեժիմով նախատեսված միջոցառումների իրականացումը չեղյալ հայտարարելն Ազգային ժողովի բացառիկ իրավասությունն են, աշխատանքում հիմնավորվել է, որ պետության առջև ծառացած արտաքին և ներքին մարտահրավերների դեմ պայքարում Անվտանգության խորհրդի կազմն ու կառուցվածքը պետք է ենթարկվեն հետևյալ փոփոխության.

4.1. Անվտանգության խորհուրդը պետք է կազմված լինի հետևյալ խմբերից՝ Անվտանգության խորհրդի հիմնական անդամներ, Անվտանգության խորհրդի այլ անդամներ[1] և կոնկրետ հարցի քննարկման և որոշման կայացման համատեքստում Անվտանգության խորհրդի հիմնական անդամների երկու երրորդի որոշմամբ ընտրված պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձինք՝ օժտված Անվտանգության խորհրդի անդամի կարգավիճակով:

4.2. Քննարկվող համատեքստում Կառավարության համապատասխան որոշման ընդունումից հետ հրավիրվում է Ազգային ժողովի հատուկ նիստ, որի ընթացքում էլ Ազգային ժողովն ընդունում է համապատասխան որոշումը: Այս պարագայում չմիջամտելով Գործադիր իշխանության գործառույթների պատշաճ իրականացմանը՝ Անվտանգության խորհրդի կազմում առաջարկում ենք առանձնացնել «**Անվտանգության խորհրդի այլ անդամներ» կարգավիճակը**. Ազգային ժողովի պաշտպանության և անվտանգության, ինչպես նաև արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովների նախագահները պետք է մասնակցեն Անվտանգության խորհրդի նիստերին սակայն խորհրդակցական ձայնի իրավունքով՝ որպես հատուկ խորհրդականներ:

4.3. Հիմնավորվել է նաև այն, որ Անվտանգության խորհրդի անդամի կարգավիճակ չունեցող Ազգային ժողովի նախագահին Անվտանգության խորհրդի կազմում պետք է տալ հատուկ կարգավիճակ այն համատեքստում, որ Անվտանգության խորհրդի նիստի օրակարգային այն հարցերը, որոնք վերաբերելու են Ազգային ժողովի բացառիկ իրավասություններին, Ազգային ժողովի նախագահը՝ որպես առաջնային մանդատով օժտված պետական բարձրագույն ներկայացուցչական մարմնի նախագահ, իրավունք ունենա սեփական նախաձեռնությամբ հատուկ կարգավիճակով մասնակցելու օրակարգային այդ հարցերի քննարկմանը՝ վերջինիս իրավունք վերապահելով ունենալ ելույթներ, զեկուցողներին ուղղել հարցեր և այլն:

5. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հետազոտության ընթացքում *ազգային անվտանգություն* եզրույթն ընկալում ենք լայն իմաստով՝ հիշյալ համատեքստում հիմնավորվել է, որ Անվտանգության խորհուրդն իր առջև դրված բացառիկ գործառույթի պատշաճ և ողջ ծավալով իրականացման նպատակով պետք է մասնակցի **այդ թվում** իրավաստեղծ գործունեությանը:

---

[1]Այս համատեքստում, սակայն, Անվտանգության խորհրդի նախագահը՝ վարչապետը, պահպանում է Անվտանգության խորհրդի նիստին որևէ այլ անձի հրավիրելու իրավասությունը:

Քաղաքականության հիմնական ուղղությունների սահմանման, կյանքի կոչելու և ազգային անվտանգության բնագավառը կարգավորելու նպատակով Անվտանգության խորհրդին պետք է վերապահել ընդունվելիք նորմատիվ իրավական ակտերի վերաբերյալ եզրակացություն տալու լիազորություն.

5.1. Մասնավորապես, մի կողմից անհրաժեշտ է հաշվի առնել, որ օրենսդրական ակտերի ընդունումը խորհրդարանի բացառիկ իրավասությունն է, որը չպետք է սահմանափակվի գործադիր իշխանության համակարգի մարմնի՝ Անվտանգության խորհրդի կողմից, մյուս կողմից էլ՝ Անվտանգության խորհրդի սահմանադրական առաքելությունը: Հիշյալ համատեքստում հիմնավորվել է, որ բոլոր այն օրենսդրական ակտերի նախագծերը, որոնք պետք է կարգավորեն ազգային անվտանգության բնագավառը, Անվտանգության խորհուրդը եզրակացություն տալու հնարավորություն պետք է ունենա: Սակայն բացասական եզրակացության պարագայում Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի երկու երրորդով, պետք է հնարավորություն ունենա «հաղթահարելու» Անվտանգության խորհրդի բացասական եզրակացությունը: Սույն առաջարկը բխում է նաև Սահմանադրության փոփոխությունների նախագծի հիմնավորումներից, որտեղ հստակ ամրագրվել էր Ազգային ժողովում ընդդիմադիր ուժերի իրավաքաղաքական դերի ուժեղացման, որպես խորհրդարանական կառավարման համակարգի պետություն, քաղաքական մեծամասնություն-ընդդիմություն երկխոսության ամրապնդման նպատակներից:

5.2. Հաջորդիվ, ազգային անվտանգության բնագավառը կարգավորող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը չեն կարող ընդունվել առանց Անվտանգության խորհրդի դրական եզրակացության: Այսինքն՝ բոլոր այն դեպքերում, երբ Անվտանգության խորհուրդն ազգային անվտանգության բնագավառը կարգավորող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի նախագծի վերաբերյալ կտա բացասական եզրակացություն, այն պարզապես կա՛մ պետք է դուրս գա շրջանառությունից, կա՛մ Անվտանգության խորհրդի դրական եզրակացությունը ստանալու նպատակով ենթարկվի համապատասխան փոփոխության:

Վերոգրյալ փոխհարաբերությունները կարգավորելու նպատակով անհրաժեշտ են սահմանադրական փոփոխություններ, որոնց պարագայում Անվտանգության խորհրդին մեր կողմից առաջարկվող լիազորությունները կամրագրվեն հիմնական օրենքում:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Հետազոտության արդյունքների վրա ձևավորված տեսական դրույթները և եզրահանգումները էական նշանակություն ունեն **Հայաստանի Հանրապետության Անվտանգության խորհուրդ** ինստիտուտի հետագա զարգացման համար: Ատենախոսության հայեցակարգային դրույթները կարող են ծառայել որպես տեսական հիմք հետազոտողների և գիտնականների համար: Առաջ քաշված առաջարկությունները կարող են օգտագործվել որպես հիմք՝ գործող օրենսդրության կատարելագործման և

նորմատիվ ակտերի մշակման համար, որոնք ուղղված են հստակեցնելու Անվտանգության խորհրդի սահմանադրաիրավական կարգավիճակը, ինչպես նաև վերջինիս լիազորություններն ու գործառույթները՝ ազգային անվտանգության և արտաքին հարաբերությունների բնագավառներում գործունեություն ծավալող մարմինների աշխատանքների համակարգման համատեքստում: Ատենախոսության եզրահանգումները կարող են կիրառվել իրավակիրառական գործունեության շրջանակներում, ինչպես նաև որոշակի վերապահումներով արդեն իսկ գործածվում են «Ռուս-Հայկական համալսարան» բարձրագույն կրթության միջպետական կրթական կազմակերպության Իրավունքի ինստիտուտի ուսումնական գործընթացում՝ «**Ազգային անվտանգության հիմունքները**» (մագիստրոսական ծրագիր) և «**Ազգային անվտանգության իրավական հիմնախնդիրները**» (բակալավրի ծրագիր) առարկաները դասավանդելիս:

Հետազոտության մեթոդաբանությունը: Աշխատանքում կիրառվել են ինչպես ընդհանուր գիտական, այնպես էլ իրավագիտությանը հատուկ մեթոդները: Ընդհանուր գիտական մեթոդներ են հանդիսացել դիալեկտիկական, վերլուծական, համադրման, պատմական, տրամաբանական, ինդուկցիայի և դեդուկցիայի մեթոդները: Որպես իրավագիտությանը հատուկ մեթոդներ կիրառվել են համակարգային վերլուծության, իրավահամեմատական, համակարգային-կառուցվածքային, ձևական-իրավաբանական, լեզվատրամաբանական մեկնաբանման մեթոդները:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը: Ատենախոսության հիմնական դրույթները ու տեսական եզրակացությունները ներկայացվել և քննարկվել են «Ռուս-Հայկական համալսարան» բարձրագույն կրթության միջպետական կրթական կազմակերպության Իրավունքի ինստիտուտի Իրավունքի տեսության և Սահմանադրական իրավունքի ամբիոնում, Հայաստանի Հանրապետության Անվտանգության խորհրդի գրասենյակում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության 8-րդ գումարման Ազգային ժողովի պաշտպանության և անվտանգության մշտական հանձնաժողովում: Հետազոտության արդյունքները արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված գիտական հոդվածներում, որոնք լույս են տեսել տարբեր ամսագրերում և գիտական ժողովածուներում: Ատենախոսության մի շարք դրույթներ ատենախոսը ներկայացրել է գիտական զեկույցների և սեմինար-քննարկումների շրջանակներում: Աշխատանքի արդյունքները կարող են ինտեգրվել Հայաստանի Հանրապետության Անվտանգության խորհրդի և Անվտանգության խորհրդի գրասենյակի գործունեությունները կարգավորող նորմատիվ իրավական ակտերում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հեղինակը հիմնավորել է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացրել թեմայի մշակվածության աստիճանը, հետազոտության տեսական, նորմատիվ և փորձառական հիմքերը, մեթոդաբանությունը, հետազոտության օբյեկտը և առարկան, նպատակը և խնդիրները, գիտական նորույթը, ձևակերպել պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, արտացոլել հետազոտության տեսական ու գործնական նշանակությունը, հետազոտության արդյունքների փորձարկումը և վերջինիս կառուցվածքը:

Առաջին գլուխը՝ «Անվտանգության խորհուրդը միջազգային պատմական զարգացման համատեքստում» վերտառությամբ, բաղկացած է երեք ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում՝ *«Ազգային Անվտանգության խորհրդի՝ որպես պետական ինստիտուտի ծագումն ու զարգացումը Ամերիկայի Միացյալ Նահանգներում և Մեծ Բրիտանիայի ու Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունում»,* հեղինակը բացահայտում է Անվտանգության կամ Ազգային անվտանգության խորհրդի ծագման և զարգացման իրավաքաղաքական պատճառները և հիմքերը՝ անգլո-սաքսոնական իրավական համակարգի առանցքային պետություններում. Ամերիկայի Միացյալ Նահանգներում և Միացյալ թագավորությունում: Հիշյալ համատեքստում քննարկվել է հատկապես պետական համակարգում գործող Ազգային անվտանգության խորհուրդների հիմնման, զարգացման, ինչպես նաև վերջիններիս կազմին ու կառուցվածքին վերաբերող նորմատիվ կարգավորումները: Դուրս են բերվել այդ թվում միևնույն իրավական համակարգում գործող երկու պետություններում առկա ինչպես նմանություններն, այնպես էլ տարբերությունները:

Երկրորդ ենթագլխում՝ *«Անվտանգության խորհրդի՝ որպես պետական ինստիտուտի, ծագումն ու զարգացումը Ռուսաստանի Դաշնությունում և Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում»,* հեղինակը բացահայտում է Անվտանգության կամ Ազգային անվտանգության խորհրդի ծագման և զարգացման իրավաքաղաքական պատճառները և հիմքերը՝ ռոմանո-գերմանական իրավական համակարգի առանցքային պետություններում՝ Ռուսաստանի Դաշնությունում և Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում: Հիշյալ համատեքստում քննարկվել է հատկապես պետական համակարգում գործող Ազգային անվտանգության խորհուրդների հիմնման, զարգացման, ինչպես նաև վերջիններիս կազմին ու կառուցվածքին վերաբերող նորմատիվ կարգավորումները: Դուրս են բերվել այդ թվում միևնույն իրավական համակարգում գործող երկու պետություններում առկա ինչպես նմանություններն, այնպես էլ տարբերությունները: Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում առկա չէ արդի իրավաքաղաքական մտքին ու տրամաբանությանը համապատասխան Անվտանգության կամ Ազգային անվտանգության խորհուրդ, բացահայտվել են այդ հանգամանքի առանցքային իրավաքաղաքական պատճառները: Հաշվի առնելով խորհրդային հասարակարգի էական ազդեցությունը Ռուսաստանի

Դաշնության կառավարման համակարգի վրա՝ ուսումնասիրվել է «ազգային անվտանգություն» և «պետական անվտանգություն» եզրույթների հարաբերակցությունը:

Երրորդ ենթագլխում՝ *«Անվտանգության կամ Ազգային անվտանգության խորհրդի դասակարգման (մոդելավորման) չափանիշները»,* հեղինակը ուսումնասիրելով մի շարք պետությունների Անվտանգության կամ Ազգային անվտանգության խորհուրդների հիմնման, կազմի և կառուցվածքին, լիազորություններին և գործառույթներին վերաբերող կարգավորումները, ինչպես նաև հիմքում ունենալով առաջին և երկրորդ ենթագլուխներում առկա վերլուծությունները՝ հիմնավորել է Անվտանգության կամ Ազգային անվտանգության խորհուրդների դասակարգման կամ մոդելավորման չափնիշները:

Երկրորդ գլուխը՝ «Հայաստանի Հանրապետության Անվտանգության խորհրդի կազմավորման հիմնախնդիրները» վերտառությամբ, բաղկացած է երեք ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում՝ *«Անվտանգության կամ Ազգային անվտանգության խորհրդի ծագումն ու զարգացումը Հայաստանի Երրորդ Հանրապետությունում»,* հեղինակն ուսումնասիրել է Հայաստանի Հանրապետության վերանկախացումից հետո Անվտանգության խորհրդի հիմնման անհրաժեշտությունն ու նպատակահարմարությունը, որտեղ քննարկվել և վերլուծվել են քննարկվող ինստիտուտի հիմնման ողջ նորմատիվ բազան՝ սկսյալ 1991 թվականից մինչև Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2015 թվականի փոփոխությունները և վերջինից բխող օրենսդրական կարգավորումները: Ավելին, ի թիվս այլնի, քննարկվել և վերլուծվել են հիշյալ մարմնի սահմանադրական ամրագրումը, նպատակահարմարությունը, ինչպես նաև անվան և բովանդակության ձևափոխման և կերպափոխման պատմությունները:

Երկրորդ ենթագլխում՝ *«Անվտանգության խորհրդի կազմավորման կարգն ու կառուցվածքը»,* հեղինակն ուսումնասիրել է Հայաստանի Հանրապետության Անվտանգության խորհրդի կազմավորման կարգն ու կառուցվածքը: Լրջագույն ուշադրության է արժանացել այն հանգամանքը, թե ի վերջո պետական բարձրաստիճան ո՞ր պաշտոնյան պետք է նախագահի Անվտանգության խորհուրդը՝ Հանրապետության նախագա՞հը, թե՞ վարչապետը: Հատկանշական է, որ անգամ կառավարման ձևի նույն տեսակում առկա չէ մեկ ընդհանուր մոտեցում, թե ով պետք է նախագահի այս առանցքային ինստիտուտը. հիմնավորվել է, որ Սահմանադրության 2015 թվականի փոփոխությունների համատեքստում Հանրապետության նախագահը որևէ կերպ չի կարող ոչ միայն նախագահել Անվտանգության խորհուրդը, այլև՝ վերջինիս անդամ հանդիսանալ: Հաջորդիվ, քննարկվել է Անվտանգության խորհրդի ներկայիս կազմը և կառուցվածքը ու հիմնավորվել, որ Հայաստանի Հանրապետության Անվտանգության խորհրդի կազմը պետք է բաժանել հետևյալ խմբերի. Անվտանգության խորհրդի հիմնական և այլ անդամներ, Անվտանգության խորհրդի անդամների ընդհանուր թվի երկու

երրորդի կայացրած որոշմամբ Անվտանգության խորհրդի անդամի կարգավիճակով օժտված անդամ, ինչպես նաև պահպանել Անվտանգության խորհրդի նախագահի՝ որևէ անձի հրավիրյալ կարգավիճակով օժտելու բացառիկ իրավասությունը:

Երրորդ ենթագլխում՝ *«Անվտանգության խորհրդի կողմից ընդունված ակտերի տեղը իրավական համակարգում»,* հեղինակն ուսումնասիրել է Անվտանգության խորհրդի հիմնումից հետո տարբեր շրջաններում Անվտանգության խորհրդի և իրավանախորդ մարմինների կայացրած որոշումների տեղը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում: Քննարկվել է Անվտանգության խորհրդի կայացրած **իմպերատիվ** որոշումների բնույթը, հիմնավորվել վերջիններիս օրենսդրական կարգավորման համատեքստում հստակեցման և որոշակիացման անհրաժեշտությունը, քանի որ բացարձակ հասկանալի չէ, թե, ի վերջո, ինչ է ասել իմպերատիվ բնույթի որոշում և որ ամենակարևորն է, թե իրավական ինչ հետևանք կարող է վրա հասնել իմպերատիվ բնույթի որոշումների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում:

Երրորդ գլուխը՝ «Հայաստանի Հանրապետության Անվտանգության խորհրդի փոխհարաբերությունները պետական մեխանիզմի հետ» վերտառությամբ, բաղկացած է երեք ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում՝ *«Անվտանգության խորհրդի կայացրած որոշումների կատարման նկատմամբ վերահսկողության հիմնախնդիրները»,* հեղինակը սահմանել է, թե ի վերջո ինչ է անհրաժեշտ հասկանալ **Անվտանգության խորհուրդ** եզրույթի ներքո: Հատկանշական է, որ հեղինակի սահմանումը և վերջինիս համար անհրաժեշտ գիտական հիմնավորումը հայկական սահմանադրական տեսությունում առաջիններից է, գուցե եզակին. մինչ այժմ առկա չէ Անվտանգության խորհրդի սահմանման գիտական հիմնավորում:

Այնուհետև, հեղինակը քննարկել և հիմնավորել է, որ Անվտանգության խորհրդի որոշումների կատարման համատեքստում Անվտանգության խորհրդի քարտուղարին օրենքով սահմանված կարգով պետք է վերապահել հստակ և սպառիչ լիազորություններ, որպիսի պարագայում կհստակեցվեն նաև այն մեխանիզմները, թե ինչպես է Անվտանգության խորհրդի քարտուղարն իրականացնելու կայացրած որոշումների նկատմամբ վերահսկողությունը: Ավելին, հիմնավորվել է, որ վերահսկողական լիազորությունների ընթացքում հիշյալ արդյունքերի վերաբերյալ զեկույցները ով, երբ և ինչ պարբերականությամբ պետք է ներկայացնի: Քննարկվել և հիմնավորվել է նաև այն, որ անհրաժեշտ է օրենքով սահմանել Անվտանգության խորհրդի գրասենյակի՝ որպես Անվտանգության խորհրդի որոշումների կատարումը համակարգող, աջակցող, ինչպես նաև որոշումների կատարման ողջ ընթացքում վերահսկողական գործառույթներով օժտված մարմին լինելու պարագան:

Երկրորդ ենթագլխում՝ *«Անվտանգության խորհրդը ազգային անվտանգության բնագավառը կարգավորող իրավաստեղծ գործունեության*

համատեքստում», հեղինակը քննարկել և հիմնավորել է, որ Անվտանգության խորհուրդը պետք է մասնակցի ազգային անվտանգության բնագավառը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի ընդունման կարևորագույն գործընթացին: Հիշյալ համատեքստում, հիմնավորվել է, թե ինչ ձևաչափով պետք է Անվտանգության խորհուրդը մասնակցի այս գործընթացին: Ազգային անվտանգության բնագավառը կարգավորող օրենսդրական ակտերի ընդունման համատեքստում որևէ նախագիծ, որը դրվում է շրջանառության, պետք է ստանա Անվտանգության խորհրդի եզրակացությունը: Հիշյալ համատեքստում, բացասական եզրակացության պարագայում օրենքի նախագիծը կարող է դրվել քվեարկության բացառապես այն դեպքում, երբ, Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի երկու երրորդով «կհաղթահարի» բացասական եզրակացությունը, և այնուհետև այն կդրվի քվեարկության: Առաջարկը բխում է այն հանգամանքից, որ սահմանադիրը հատուկ ուշադրության է արժանացրել խորհրդարանական ընդդիմության քաղաքական կշռի բարձրացմանը և վերահսկողական գործառույթների ավելացմանը: Բացասական եզրակացություն պարագայում առանց իշխանություն-ընդդիմություն երկխոսության հնարավոր չի լինի հաղթահարել այն: Հաջորդիվ հիմնավորվել է, որ ազգային անվտանգության բնագավառը կարգավորող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի որևէ նախագիծ չի կարող ընդունվել առանց Անվտանգության խորհրդի դրական եզրակացության: Չստանալով Անվտանգության խորհրդի դրական եզրակացությունը՝ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի նախագիծը դուրս է գալիս շրջանառությունից:

Երրորդ ենթագլխում՝ *«Անվտանգության խորհուրդը Զինված ուժերի նկատմամբ վերահսկողության համատեքստում»,* հեղինակն ուսումնասիրել և հիմնավորել է, որ գործող կարգավորումների համատեքստում Անվտանգության խորհուրդը ոչ միայն սահմանում է պաշտպանության քաղաքականության հիմնական ուղղությունները, այլև Զինված ուժերի նկատմամբ օժտված է վերահսկողական լիազորություններով, որոնք սահմանված են անուղղակի. նման պնդման համար հիմք է հանդիսացել Անվտանգության խորհրդի նիստերի ուսումնասիրությունը, օրենսդրական կարգավորումները, ինչպես նաև հեղինակի կողմից Անվտանգության խորհրդի սահմանման հիմնավորումը:

Ի թիվս այլնի, ուսումնասիրվել է Անվտանգության խորհրդի գործառույթները, որպիսի պարագայում արձանագրվել և հիմնավորվել է, որ վերջիններս չեն կարող սահմանափակվել բացառապես մարտավարական և օպերատիվ պլանների հաստատումով, անհրաժեշտ է նաև մշտադիտարկման և վերահսկողական լիազորությունների առկայությունը:

«Եզրահանգումները» բաժնում ընդգրկված են հետազոտության հիմնական արդյունքները և հեղինակի եզրահանգումները, ինչպես նաև օրենսդրության կատարելագործման առնչությամբ ներկայացված առաջարկները: Ի լրումն պաշտպանության ներկայացվող դրույթների, այդ եզրահանգումները և առաջարկները ամփոփ հանգում են հետևյալին.

1. Մինչև Սահմանադրության 2015 թվականի խմբագրությունն ազգային անվտանգության բնագավառում որոշում կայացնելու համատեքստում Ազգային անվտանգության խորհրդի որոշումը պարտադիր չի եղել անգամ Հանրապետության Նախագահի համար: Հանրապետության Նախագահի համար առկա չէր որևէ իրավական հետևանք այն դեպքերի համար, եթե վերջինս չկատարեր Ազգային անվտանգության խորհրդի որոշումները: Հանրապետության Նախագահն առանց որևէ սահմանափակման այս կամ այն սուբյեկտին կարող էր ներգրավել Ազգային անվտանգության խորհրդի աշխատանքներին: Կախված Ազգային անվտանգության խորհրդի **<u>խորհրդակցական</u>** կարգավիճակից բխող իրավական հետևանքներից՝ Ազգային անվտանգության խորհրդում մշտական անդամի կարգավիճակ են ունեցել ինչպես գործադիր իշխանությունից դուրս պետական պաշտոնատար անձինք, այնպես էլ որևէ պետական կամ համայնքային պաշտոն չզբաղեցնող անձինք: Հիմնավորումը եղել է այն, որ Ազգային անվտանգության խորհուրդը մի մարմինն էր, որը հավաքվում, քննարկում էր այս կամ այն հարցը, Հանրապետության Նախագահն էլ իր իսկ կողմից ձևավորած Ազգային անվտանգության խորհրդի որոշման կատարման համատեքստում որևէ կաշկանդվածություն չուներ:

2. Ի տարբերություն Անվտանգության խորհրդի՝ Ազգային անվտանգության խորհուրդն անսահմանափակ լիազորությունների շրջանակով օժտված պետական մարմին էր: Հանրապետության Նախագահն Ազգային անվտանգության խորհրդի քննարկմանը կարող էր ներկայացնել ցանկացած հարց, մինչդեռ Անվտանգության խորհրդի համար Սահմանադիրը հստակ լիազորություն է առանձնացրել: Հաշվի առնելով սահմանադրական այդ լիազորությունը՝ քննարկվել է մարմինն անվանակոչել ***Պաշտպանության խորհուրդ:***

3. Անհրաժեշտ է Սահմանադրությամբ ամրագրել, որ ***Հայաստանի Հանրապետության Անվտանգության խորհուրդը սահմանադրական, կոլեգիալ համակարգող մարմինն է, որը ստեղծված է ապահովելու Հայաստանի Հանրապետության Կառավարության, իսկ պատերազմի ժամանակ՝ Զինված ուժերի Գերագույն հրամանատարի՝ ազգային անվտանգության ապահովման բնագավառում լիազորությունների իրականացումը:***

4. Անվտանգության խորհրդի անդամներին պետք է բաժանել հետևյալ խմբի՝ **Անվտանգության խորհրդի հիմնական կամ մշտական անդամներ և Անվտանգության խորհրդի այլ անդամներ:** Կարևոր է այն, որ այս երկու խմբի անդամների սպառիչ ցանկը պետք է սահմանված լինի Անվտանգության խորհրդի մասին օրենքով:

Անվտանգության խորհրդի հիմնական անդամներն իրենց ընդհանուր թվի երկու երրորդ ձայնով կոնկրետ հարցի քննարկման, որոշում կայացնելու և կատարելու համատեքստում կարող են հանրային իշխանության որևէ

անդամի Անվտանգության խորհրդի անդամի կարգավիճակ շնորհել՝ վերջինից բխող իրավական բոլոր հետևանքներով:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահին՝ որպես առաջնային մանդատով օժտված պետական միակ ներկայացուցչական մարմնի նախագահի, պետք է վերապահել Անվտանգության խորհրդի նիստերին սեփական հայեցողությամբ մասնակցելու իրավունք: Հիշյալ համատեքստում պետք է օրենքով սահմանել, որ պատերազմ հայտարարելու և խաղաղություն հաստատելու, ինչպես նաև ռազմական և արտակարգ դրությունների իրավական ռեժիմների ընթացքում հրավիրված Անվտանգության խորհրդի նիստերին Ազգային ժողովի նախագահի մասնակցությունը պարտադիր է, իսկ վերջինիս մասնակցության անհնարինության պարագայում նրա փոխարեն Անվտանգության խորհրդի նիստին պետք է մասնակցի Ազգային ժողովի նախագահի այն տեղակալը, որն ընտրվելիս ամենից շատ ձայն է ստացել:

5. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պաշտպանության ու անվտանգության և արտաքին հարաբերությունների հարցերով մշտական հանձնաժողովների նախագահները, տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող մարմնի ղեկավարը, ինչպես նաև մշակույթի բնագավառը կարգավորող մարմնի ղեկավարը՝ որպես Անվտանգության խորհրդում ծառայող հատուկ խորհրդականներ, պետք է համալրեն Անվտանգության խորհրդի այլ անդամների կազմը՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

6. Անվտանգության կամ Ազգային անվտանգության խորհրդի մոդելավորման հետևյալ չափանիշները: Անվտանգության կամ Ազգային անվտանգության խորհուրդները կարող ենք դասակարգել.

ա) ըստ հիմնադրման փաստաթղթի՝ *ա) Սահմանադրությամբ և բ) Օրենսդրությամբ նախատեսված.*

բ) ըստ նախագահող սուբյեկտի՝ *ա) նախագահական, բ) վարչապետական և գ) խառը.*

գ) ըստ կազմի՝ *ա) սիմետրիկ և բ) ասիմետրիկ.*

դ) ըստ անդամների սահմանադրահիրավական կարգավիճակի՝ *ա) պարզ, բ) բարդ և գ) խառը:*

7. Անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով հստակեցնել **իմպերատիվ բնույթի որոշում կայացնելու** ծավալները, դեպքերը, ինչպես նաև՝ որ պետական մարմինը կամ պաշտոնատար անձն է նման որոշման հասցեատերը, անհրաժեշտ է հստակեցնել այն շրջանակը, որի պարագայում Անվտանգության խորհուրդը կարող է ընդունել խորհրդատվական բնույթի որոշումներ:

8. Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Անվտանգության խորհրդի գրասենյակը գտնվում է Հանրապետության վարչապետի աշխատակազմում՝ ազգային անվտանգության բնագավառի կարգավորման համատեքստում Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարը՝ որպես Անվտանգության խորհրդի այլ անդամ պետք է համալրի Անվտանգության խորհրդի կազմը՝ Գրասենյակի բնականոն աշխատանքներն ապահովելու

նպատակով: Անվտանգության խորհրդի որոշումների կատարման համատեքստում պետք է հստակ օրենսդրական արձանագրում ստանան Անվտանգության խորհրդի քարտուղարի սպառիչ լիազորությունները, ինչպես նաև այն մեխանիզմները, թե ինչպես և ինչ պարբերականությամբ է Անվտանգության խորհրդի քարտուղարն իրականացնելու հիշյալ որոշումների նկատմամբ վերահսկողությունը: Ավելին՝ պետք է նախատեսել, թե վերահսկողական լիազորությունների ընթացքում հիշյալ արդյունքերի վերաբերյալ զեկույցները երբ և որ պաշտոնատար անձին է այն ներկայացնում: Այս կարգավորումը կարող է լինել նաև ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով, սակայն ոչ թե Հանրապետության վարչապետի, այլ Կառավարության որոշմամբ: Անհրաժեշտ է հստակեցնել Գրասենյակի՝ որպես Անվտանգության խորհրդի որոշումների կատարումը համակարգող, աջակցող, ինչպես նաև որոշումների կատարման ողջ ընթացքում վերահսկողական գործառույթներով օժտված մարմին լինելը: Հայաստանի Հանրապետության վարչապետի՝ 11 հունիսի 2018 թվականի N 752-Լ «Անվտանգության խորհրդի գրասենյակի կանոնադրությունը և հաստիքացուցակը հաստատելու մասին» որոշմամբ սահմանված հարաբերությունները պետք է կարգավորել ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով: Չափազանց կարևոր է, որ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական այդ ակտն ընդունվի Կառավարության որոշմամբ:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում

1. Հրանտ Սարկիսով // «Հայաստանի Հանրապետության Անվտանգության խորհրդի իրավաքաղաքական կարգավիճակի հիմնախնդիրները»

Հայաստանի Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարան «Տեղեկագիր» 3 (107) 2022, էջ 129 - 141

2. Հրանտ Սարկիսով // «Անվտանգության խորհրդի նախագահը խորհրդարանական կառավարման համակարգում՝ նախագա՞հ, թե՞ վարչապետ»

«Արդարադատություն» գիտական հանդես 2023 (1) 58, էջ 40 - 46

3. Հրանտ Սարկիսով // «Ազգային անվտանգություն» եզրույթի ընկալումը ռուսական և հայկական իրավաքաղաքական իրականությունում (Ազգային անվտանգության ռազմավարությունների համատեքստում)»

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարան «Տեղեկագիր» 4 (112) 2023, էջ 128 - 142

4. Հրանտ Սարկիսով // «Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանական Հանրապետության Ազգային անվտանգության ռազմավարությունների իրավահամեմատական վերլուծություն՝ հանրապետություններին հատկացված տեղի համատեքստում»

«Հանրային կառավարման արդի 30 հիմնախնդիրները» / Միջազգային գիտական կոնֆերանսի նյութեր //Մայիսի 22-24, 2024, էջ 314 - 323

5. Հրանտ Սարկիսով // «Ազգային անվտանգության խորհրդի ստեղծման պատմական ակունքները և զարգացումը Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի միացյալ թագավորությունում»

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարան «Տեղեկագիր» 3 (115) 2024, էջ 181 - 194

6. Հրանտ Սարկիսով // «Ազգային անվտանգության խորհրդի ստեղծման պատմական ակունքները և զարգացումը Ամերիկայի Միացյալ Նահանգներում»

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարան «Տեղեկագիր» 1 (118) 2025, էջ 111 - 123

7. Հրանտ Սարկիսով // «Հայաստանի Հանրապետության Անվտանգության խորհրդի կայացրած որոշումների կատարման նկատմամբ վերահսկողության իրավաքաղաքական հիմնախնդիրները»

Երևանի Գլաձորի համալսարանի հիմնադրման 35-ամյակին նվիրված «Գլաձոր 35» գիտական հոդվածների հոբելյանական ժողովածու, 2025, էջ 147 - 179

8. Հրանտ Սարկիսով // Անվտանգության կամ Ազգային անվտանգության խորհրդի դասակարգման (մոդելավորման) չափանիշների հիմնախնդիրները

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարան «Տեղեկագիր» 4 (121) 2025, էջ 175 - 188

САРКИСОВ ГРАНТ АРМЕНОВИЧ
ПРОБЛЕМЫ КОНСТИТУЦИОННО-ПРАВОВОГО СТАТУСА СОВЕТА БЕЗОПАСНОСТИ
РЕЗМЮЕ

Научное исследование посвящено комплексному конституционно-правовому анализу статуса Совета безопасности Республики Армения, его места и роли в системе государственного управления, а также выявлению актуальных правовых и политико-правовых проблем, возникающих в процессе реализации конституционной функции обеспечения национальной безопасности.

Актуальность темы обусловлена тем, что обеспечение национальной безопасности является одной из ключевых и системообразующих функций современного государства. Национальная безопасность представляет собой сложное, многоуровневое направление государственной деятельности, требующее комплексного и междисциплинарного научного осмысления. Особую значимость данная проблематика приобретает для Республики Армения, находящейся в условиях продолжающихся внешних и внутренних

угроз, а также фактически не объявленного вооружённого конфликта, что объективно повышает роль институтов, участвующих в формировании и реализации политики национальной безопасности. Советы безопасности как специализированные консультативно-координационные органы впервые были институционализированы в середине XX века, прежде всего в системе государственного управления Соединённых Штатов Америки, с целью содействия главе государства в реализации конституционных полномочий в сфере национальной безопасности. В дальнейшем аналогичные органы, отличающиеся по своему конституционно-правовому статусу, структуре и объёму компетенции, получили развитие в ряде государств, включая Республику Армения. Место и роль Совета безопасности в системе органов государственной власти варьируются в зависимости от формы правления, политико-правовой модели государства, а также его положения в системе международных отношений. В этом контексте особый научный интерес представляет армянская модель Совета безопасности, сформировавшаяся в условиях трансформации системы государственного управления и перехода к парламентской форме правления после конституционных реформ 2015 года. Целью диссертационного исследования является всесторонний теоретический и практический анализ историко-политической и политико-правовой эволюции института Совета безопасности Республики Армения (до Конституции 2015 года ь Совета национальной безопасности), его состава, структуры, функций и полномочий, а также выявление конституционно-правовых пробелов и противоречий в действующем регулировании с последующей разработкой научно обоснованных предложений по их устранению. Объектом исследования являются общественные отношения, складывающиеся в процессе функционирования Совета безопасности Республики Армения в системе государственного управления. Предметом исследования выступают происхождение и развитие Совета безопасности как государственного института, проблемы его формирования, состава и структуры, а также правовая природа и место принимаемых им актов в системе нормативных правовых актов. В ходе исследования определён конституционно-правовой статус Совета безопасности Республики Армения и раскрыта его роль в системе государственного управления; проанализирован объём его полномочий и соотношение с Национальным Собранием, Правительством и иными органами государственной власти; исследована правовая природа актов Совета безопасности, их нормативный характер и место в иерархии правовых актов; выявлены особенности взаимодействия Совета безопасности с органами законодательной и исполнительной власти; проведён сравнительно-правовой анализ моделей Советов безопасности в государствах романо-германской и англосаксонской правовых систем, а также в постсоветских республиках. Теоретическую основу исследования составляют положения конституционного, административного и государственного права, теории государства и управления. Методологическую базу образуют

общенаучные и специальные юридические методы познания, включая системный и сравнительно-правовой анализ. Научная новизна исследования заключается в том, что оно представляет собой первое комплексное конституционно-правовое исследование института Совета безопасности Республики Армения. В работе сформулировано авторское определение понятия «Совет безопасности Республики Армения» и обоснована необходимость его нормативного (конституционного) закрепления; предложена классификация моделей Советов безопасности по ряду конституционно-правовых критериев; обоснована целесообразность наделения Совета безопасности полномочиями по контролю и мониторингу исполнения принимаемых им решений; аргументирована необходимость обязательного участия Совета безопасности в правотворческом процессе в сфере национальной безопасности; разработаны предложения по совершенствованию состава и структуры Совета безопасности с учётом особенностей парламентской формы правления в Республике Армения.

Теоретическая и практическая значимость исследования заключается в возможности использования полученных выводов и предложений в законотворческой и правоприменительной деятельности, а также в учебном процессе при преподавании дисциплин конституционно-правового и государственно-правового цикла.

HRANT SARKISOV

FUNDAMENTAL ISSUES OF THE CONSTITUTIONAL AND LEGAL STATUS OF THE SECURITY COUNCIL

ABSATRACT

The scientific research is devoted to a comprehensive constitutional and legal analysis of the status of the Security Council of the Republic of Armenia, its place and role within the system of public administration, as well as to identifying relevant legal and political-legal problems arising in the process of implementing the constitutional function of ensuring national security. The relevance of the topic is determined by the fact that ensuring national security constitutes one of the key and system-forming functions of a modern state. National security represents a complex, multi-level sphere of state activity requiring comprehensive and interdisciplinary scholarly reflection. This issue is of particular importance for the Republic of Armenia, which operates under conditions of ongoing external and internal threats, as well as a de facto undeclared armed conflict, which objectively increases the role of institutions involved in the formation and implementation of national security policy. Security councils as specialized advisory and coordinating bodies were first institutionalized in the mid-twentieth century, primarily within the system of public administration of the United States of America, with the aim of assisting the head of state in exercising constitutional powers in the field of national security. Subsequently, similar bodies-differing in their constitutional and legal status, structure, and scope of competence-were developed in a number of

states, including the Republic of Armenia. The place and role of the Security Council within the system of state authorities vary depending on the form of government, the political-legal model of the state, as well as its position in the system of international relations. In this context, the Armenian model of the Security Council is of particular scholarly interest, as it was formed under conditions of transformation of the public administration system and the transition to a parliamentary form of government following the constitutional reforms of 2015.

The purpose of the dissertation research is to conduct a comprehensive theoretical and practical analysis of the historical-political and political-legal evolution of the institution of the Security Council of the Republic of Armenia (prior to the 2015 Constitution - the National Security Council), its composition, structure, functions, and powers, as well as to identify constitutional and legal gaps and contradictions in the current regulation, followed by the development of scientifically substantiated proposals for their elimination. The object of the research comprises social relations arising in the process of functioning of the Security Council of the Republic of Armenia within the system of public administration. The subject of the research includes the origin and development of the Security Council as a state institution, issues of its formation, composition, and structure, as well as the legal nature and place of the acts adopted by it within the system of normative legal acts. In the course of the research, the constitutional and legal status of the Security Council of the Republic of Armenia was determined and its role within the system of public administration was revealed; the scope of its powers and its relationship with the National Assembly, the Government, and other state authorities were analyzed; the legal nature of the acts of the Security Council, their normative character, and their place in the hierarchy of legal acts were examined; the specific features of interaction between the Security Council and legislative and executive authorities were identified; and a comparative legal analysis of security council models in states of the Romano-Germanic and Anglo-Saxon legal systems, as well as in post-Soviet republics, was conducted. The theoretical basis of the research consists of the provisions of constitutional, administrative, and public law, as well as the theory of the state and public administration. The methodological framework is formed by general scientific and special legal methods of cognition, including systemic and comparative legal analysis. The scientific novelty of the research lies in the fact that it constitutes the first comprehensive constitutional and legal study of the institution of the Security Council of the Republic of Armenia. The research formulates an original definition of the concept of the "Security Council of the Republic of Armenia" and substantiates the necessity of its normative (constitutional) consolidation; proposes a classification of security council models based on a number of constitutional and legal criteria; substantiates the expediency of granting the Security Council powers of control and monitoring over the implementation of its decisions; argues for the necessity of mandatory participation of the Security Council in the law-making

process in the field of national security; and develops proposals for improving the composition and structure of the Security Council, taking into account the specific features of the parliamentary form of government in the Republic of Armenia. The theoretical and practical significance of the research lies in the possibility of applying the obtained conclusions and proposals in legislative and law-enforcement activities, as well as in the educational process when teaching disciplines of the constitutional-law and public-law cycle.